

Լուսաբան Զխարի համար անհնաժողովական
հրկուշարթիւն. ժողովուրդը գոհնատ ու սար-
սափահար դիտում էր զգալիորեն տեղը:
Շատերը չէին կարողանում իրանց տեղերը ու-
րոշել: Զէր մնացել ոչ ածուխ և ոչ էլ մոխիր.
քամին ամեն ինչ մաքրել, տարել էր: Ես ինքս
տեսայ գիւղից հեռու ատարեալ քամուց
թոցրած վառված փայտի կտորներ:

Սրտաճվիկ էր տեսնել ու լսել այն արտա-
սուտախառն աղերասները, որով մի քանի ան-
ձինք, երբեմն ունեւոր և լաւ ապրող, փողոց
էին եկել և աղաչում էին. «Ո՞վ էք բերստո-
նեայ, փոխ առէք մի 50 կօպէկ, ընտանիքս
անօթի է, երեխաներս հաց են խնդրում»...
Սա բոլոր էր դուրս եկած իր տնից, իսկ նրա
եղբայրը հիւանդ կնոջն ու փոքրիկ երեխանե-
րին ազատելիս թէ գլխաւոր էր կորցրել և
թէ կալօշի (կրկնակօշիկ) մէկը... Նա այդպէս
էր մնացել մինչև լոյս, երբ կրակից ազատ-
վածներէն մէկը նրա համար ոտնաման էր ու-
ղարկել... Եւ այս երկու եղբոր կարողութիւ-
նը միմիայն 43 կօպէկ էր, որը պատահմամբ
արխարախի գրպանումն ունէր մեծ եղբայրը...

Երեւակայեցէք հայ նահապետական ընտանիք,
ուր երեք եղբայր միասին են ապրում իրանց
կանանցով և երեխաներով—և վառվող տներ
մեծ մասը, համարեա 3/4-ը այդպիսի ընտա-
նիքներէն էր: Այս ընտանիքներէն մի քա-
նիստը պատուարկում էին և օգնութիւն ստա-
նում շատ չքաւորներ, իսկ երէկվայ նրանց
բարեբաւները այսօր հէց այդ չքաւորների
բերած «ճաղի» ով են ապրում... Սրանք
փաստեր են, ընթերցող, և ես ինքս տեսել եմ
այս...

Վերջացնելով խօսքս, ես համարձակում եմ
հայ հասարակութեան ուղը դարձնել Զխարի
թշուառ ընտանիքների վրա. մի մոռանար, սի-
րելի ընթերցող, որ քո տուած 5 կօպէկը Զը-
խարում անբախտած մի երեխայի օրական
հաց կը տայ... Մի անգամ ևս ցոյց տուր,
եղբայրս, հայ, որ քո սրտում դեռ անշէջ է
և հզօր մարդասիրութեան զգացմունքը...

Ես, իբրեւ անհատական այդ ողորմելի թշուառ
վայրի, նրա անտուն ժողովուրդի յանձնարարած
կոչն եմ կարգում ձեզ, բարեխիտ մարդիկ,
օգնութիւն և ցաւակցութիւն յուսարով հաս-
րակութիւնից և օժանդակութիւն ձեռնհաս
անձերից...

Զ. Կաճ.

ՈՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՆՏՈՒՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Լոնդոնի առևտրական պալատի առանձին
պաշտօնեաները, որոնց ուղարկել էր անգլիա-
կան կառավարութիւնը Պարսկաստան այդ
վերջինի առևտուրը հետազոտելու համար,
ներկայացրին իրանց զեկուցումը, որը գլխա-
ւորապէս վերաբերում է Պարսկաստան ներ-
մուծվող ապրանքներին:

Հաստատողների կարծիքով, Պարսկաստանը
բաւական մեծ շուկայ է թէ Անգլիայի և թէ
Ռուսաստանի համար: Երկու պետութիւնների
առևտրական ազդեցութեան շրջանը կարելի է
ձիշտ կերպով սահմանափակել. և դրան հնչող
կարելի է հասնել, եթէ մի փոքր զիջում անվի
թէ մէկ և թէ միւս կողմից: Ներկայ դէպքում
պարսկական պետութիւնը պէտք է մաս
մաս բաժանել. հիւսիսային Պարսկաստանը,
ուր ամբողջապէս կը գործէ Ռուսաստանը, և
հարաւային Պարսկաստանը, ուր բաց առապէս
Անգլիան կը ներմուծէ ապրանքներ: Իսկապէս
Ռուսաստանը ներմուծում է Պարսկաստանի գա-
նազան ապրանքներ 25 միլիոն ռուբլ գումարի
(2,550,000 ֆունտ ստերլինգ), իսկ ստանում
է ապրանքներ 3,900,000 ռ. գումարի: Առան-
ձին յօդուածներով ներմուծում այսպէս է դա-
սաւորվում. հացը, հացահատիկը և ալիւրը—
700 հազար ռուբլու, աղ—30 հազար ռուբ-
լու, շաքար—11 միլիոն ռուբլու, թէյ—
620 հազար ռուբլու, ծխ խոտ—192 հա-
զար ռուբլու, անտառային նիւթեր—192
հազար ռուբլու, չիւրամի սերմ—360 հա-
զար ռուբլու, զանազան մետաղներ—395 հա-
զար ռուբլու, զանազան հում նիւթեր 1,500,000
ռուբլու, գործարանական և արհեստագործական
արդիւնքներ 9,900, 000 ռուբլու և այլն: Ար-
տահանութիւնը Պարսկաստանից հիմնված է
զանազան անասնի պտուղների վրա: Արտա-
հանվում են 1,103,500 պուդ Ժրգեր 2,050,000
ռ. գումարի, մնացած ապրանքները աննշան են:

Ա.ԶԱՆԵՐԹՈՒ ՏԵՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
(Նամակ Վերին-Աղայից)

Անչափ ծանր է մեր ժողովուրդի ներկայ դը-
րութիւնը, ծանր և յուսահատական: Վերջին

մի քանի տարիներ թանգութիւնն ուղղակի
քամել է մեր գիւղացիներին, բայցայն նրանց
տնտեսական վիճակը:

Դրա բուն պատճառը, ի հարկէ, թանգու-
թիւնը չէ, այլ այն, որ մեր ժողովուրդը, ա-
ւելի քան հարկաւոր է, շատ է թէ ժամանա-
կի և թէ իր ունեցածի նկատմամբ և անտար-
բեր իր ապագայի նկատմամբ: Ապագան կար-
ծես նրան ոչ մի հոգս չէ պատճառում. նա
գոհ է, եթէ այսօր կուշտ է: «Եսօր լաւ ու-
տանք խմենք, վաղն Սատուած ողորմած է».
հաւա նրա պատճառաբանութիւնը և յարգելի
օրէնքը: Ել ինչ խօսք, որ այդպիսի ժողովուրդի
մէջ տնտեսելու—ապագայի մասին մտածելու—
կարգաւորան ճանիւն հող չը կարողանայ գտնել:
Մեր գիւղացին արդէն գտնվում էր տնտե-
սական անկման չար ճանապարհի վրա և մի
թեթիւ զարկի էր սպասում բոլորովին քայ-
քայվելու համար: Այդ հարվածը տուեց թան-
գութիւնը:

Ցորենի պուզն արժէ 1,60—1 ռ. 90 կօպէկ,
պարսիկը՝ 8—10 ռ., իւլինը՝ 23—24 ռ., ոչ-
խարի մի ֆունտը՝ 15—18 կ., տաւարինը՝
7—10 կ., ձուի երկուսը հինգ կօպէկ էլ չէ
ձարվում և այլն:

Մեր խեղճ գիւղացին իր թոյլ ու քայքայ-
ված ուժերով էլ ինչպէս կարողանայ դէմ դը-
նել երկու զօրեղ թշնամիներին՝ քաղցին և
սառնամանիքներին. ինչպէս կարողանայ լը-
րացնել իր բազմադարձ ընտանիքի կարիք-
ները: Եւ նա խոնարհվում, յաղթվում է նը-
րանցից:

Շատ ընտանիքներ ոչ միայն բոլորովին մերկ
են, ոչ միայն մի չնչին գուլպայ էլ չեն կա-
րողանում գնել՝ գոնէ իրանց փոքրիկների ու
տիկնիքը սառչելուց ազա ելու համար, այլ
օրվայ ցածր հացին էլ կարօտ են: Առանց
տաք հագուստի դարձեալ կարելի է մի կերպ
«եծալ գնալ». ինչպէս ապրել, եթէ հացը,
մարդու անհրաժեշտ այդ ուտելիքը, չը լինի:
Սատուածն անչափ խառնապահանջ է. նրա պա-
հանջներն անյետաձգելի են:

Այս դրանց միջոցը—պարտքը, գիւղացուն
խեղճ այդ սոսկալի պարտքը:

Երբեք, գեթ խեղճ շինականը հրէշային
տոկոսները վճարելով կարողանար գոհացնել
ամառիկ վառիտառներ: Ոչ. այդ շատ քիչ է.
միակ հողը, տան արժեքաւոր իրերն իսկ
սափալած է նա գրաւ դնել՝ քաղցից չը մեռ-
նելու և ցրտից չը սառչելու համար:

Եթէ մեր կլիմայի բարեխառնութեան և ջը-
րերի առատութեան հետ միասին ունենայինք
նաև բաւականաչափ հող, գուցէ այսպիսի ան-
նախանձ օրերի չը հասնէինք: Բայց ուր է:

Ինչ հին բաժանմամբ մեր ընտանիքների
իւրաքանչիւր անգամին—գլխին, տրվել է 8
պուդ հող, որով վերին-Աղայի 5600 պ. հողը
բաժանված է եղել 700 գլխի վրա: Այժմ հողի
այդ քանակութիւնը պէտք է բաժանել 1150
շնչի վրա (այս է մեր ժողովուրդի ներկայ մո-
տաւոր թիւը), այնպէս որ ամեն մի գլխին
կը հասնի 5 պ. 3 ֆ. հող: Մեզնում հողի մի
պուդը, միջին թուով, բերում է 5 պ. բաւակը
(կուտով), որի պուզն էլ, միջին թուով, 3 ռ.
հաշվելով, 5 պ. 3 ֆ. հողը կը բերէ տարին
76 ռ. 12/3 կ.: Սրանից կարծածատիրոջ մա-
սը, տէրութեան հարկը և միւս ծախսերը
դուրս գալով, կէսը հազիւ է մնում:

Այս էլ մի բան է, եթէ ամեն տարի լինի.
բայց հօ չէ կարելի շարունակ մի և նոյն 5
պ. 3 ֆ. հողը ցանել. չէ որ նրան հանգիստ
է հարկաւոր, պարտաւորանք է պէտք, որ
մեկնում բացառիկ երեւոյթ է:

Բացի դրանից գրաւ դրված հողերը, քիչ
բացառութեամբ, ընդհանուր պարտաւորանքի սե-
փականութիւն դառնալով, կենտրոնանում են
մի քանի «ընտրեալ ազաների» ձեռքում: Այս
է պատճառը, որ մի քանիսն ունեն 100—240,
իսկ միւսները միայն 6—10 պ. հող: Այս ա-
նարդարութեան վերջ տալու համար, կտա-
ւարկէինք՝ նորից բաժանել մեր հողերը:

Մեր գիւղացիների միւս արդիւնատու զբաղ-
մունքը չերամպագութիւնն է: Սա թէն շատ
տարածված, բայց նահապետական ձեռով պա-
հելու պատճառով, սպասելի օգուտները չէ
տալիս:

Ժողովուրդը մայր-երկրից իր հացը չը ստա-
նալով, ստիպված է թողնել երկրագործու-
թիւնը և ուրիշ արհեստների մէջ ապրուստ
որոնել: Այստեղ տիրող միակ արհեստը հիւս-
նութիւնն է, որ, իբրեւ աւելի կոպիտ արհեստ,
առավելայն աղուութիւնը չունի այժմ:

Արհեստների վայրը քաղաքն է: Մեր «դուլ-
գար» աղաղբիցին էլ իր գիւղին և օջախին
արդիւնաւէտ է:

«Մնաք բարով» ասելով, քաղաք է շտապում
փող աշխատելու՝ տունը պահելու և օրաուր
անող պարտքերը վճարելու: Այստեղ գինեւոր-
ւում և «տրակտիւններում» վառնելով իր դառն
աշխատանքը, կորցնելով և իր առողջութիւնը,
մի քանի տարի օտարութեան մէջ տառապե-
լուց յետոյ, պարտքով հայրենիք է վերադառ-
նում և շատ անգամ թունաւորում իր անա-
րատ ընտանիքը:

Պարտքով դնաց, պարտքով էլ եկաւ...
Իսկ թէ գիւղերում «պարտք» ինչ է նշա-
նակում, կարող է հասկանալ միայն նա, ով
դժբաղդութիւն է ունեցել զգալու «պարտքի»
դառնութիւնն ու ոյժը...

Յակովբ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кіев. Газ.» լրագիրն ասում է, որ Կովկա-
սեան փոխարքայութիւն կազմելու հարցը չէ
կարելի համարել վերջին օրերս լուծվող մի
խնդիր: Ինչ ևս իշխան Սվետոսլավ Միքայել
ներքին գործերի մինիստր եղած ժամանակը
հերթական էր այդ հարցը, և Կովկասի փո-
խարքայութեան իբր առաջին թեկնածու յա-
մառութեամբ համարում էին իշխան Պ. Գ. ին:
Կովկասում փոխարքայութիւն հիմնելը դեռ
սրանից 4 տարի առաջ Պետերբուրգում քննու-
թեան առարկայ էր: Եթէ այժմ Պետերբուր-
գում տարածված այդ լուրը հաստատվի, ա-
սում է յիշված լրագրի Պետերբուրգի թղթա-
կիցը,—այդ ժամանակ՝ ինչպէս մենք տեղեկա-
ցել ենք, Կովկասի նոր վարչութիւնն անյա-
պաղ կը ձեռնարկէ այնտեղ գոյութիւն ունե-
ցող վարչական և հասարակական կարգերի
բարեփոխութեան անհրաժեշտ գործին: Այդ
աշխատանքների նպատակը չը պէտք է լինի
Կովկասն աւելի ևս առանձնացնել, կարելի
Ռուսաստանի միւս մասերից և ստեղծել այն-
տեղ տարբեր, մի աւելի ստոր վարչական
ու հասարակական սիստէմ, այլ ընդհա-
կառակը՝ բոլոր ջանքը գործ պէտք է դրվի
Կովկասին տալ, հնար եղածին չափ, Ռուսաս-
տանի ներքին նահանգների դատական, վար-
չական և հասարակական կարգերը: Փոխարքա-
յութեան գլխաւոր ջանքը լինելու է կազմա-
կերպի տեղական ազգաբնակչութիւնը և բա-
ւարարութիւնն տալ նրա հողերին, կրթական
և հասարակական պահանջներին:

Այսօր, մարտի 3-ին, կայանալու է Թիֆլիսի
ձայնաւորների մասնաւոր խորհրդակցութիւնը
քաղաքագլուխ պ. Վերմիշնանի առաջարկը
ընկնելու Մեր ընթերցողներին արդէն յայտնի
է, որ պ. Վերմիշնանն առաջարկել է դուռային
քննութեան առնել, թէ ինչ միջոցներ պէտք
է ձեռք առնել և ինչ փոփոխութիւններ մտը-
նել, որ պետական կազմը կանոնաւորվի, այդ
կազմը բաւարարութիւն տայ տեղական պա-
հանջներին և նոր զարկ տայ ժողովրդական
բարօրութեանը: Ահա այդ առաջարկի մաս-
նաւոր քննաստատութիւնը և այդ առիթով
խորհրդակցութիւն լինելու է այս երեկոյեան:

Փետրվարի 22 ին Պետերբուրգում իստե-
ներների դաշնակցութեան ժողովը, 350 ան-
դամների մասնակցութեամբ, քննելով Բագուի
աղէտալի դէպքերը կայացրեց մի որոշում,
որից առաջ ենք բերում մի քանի կոորդինե-
«Ժողով» խորագէտ վրդոված է, որ մեր ժամա-
նակում հնարաւոր է լինում այդպիսի կոոր-
ւած, որի առաջ գտնաւորվում են նոյն իսկ
Բարթեղմիէոսեան գիւղերի սարսափները և իր
բարոյական պարտաւորութիւնն է համարում
յայտնել իր խորին ջայռոյթը այդ զգալիա-
յին սպանդանոցի համար, որ նախակառուցվող
ծածկում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի
առաջ ոչ միայն իրանց՝ այդ դէպքերին անմի-
ջական մասնակցողներին և նրանց զաղտնի
ղեկավարներին, այլ և ամբողջ առաջ հաս-
կալութիւնը, եթէ նա կը հանդիսանայ լուս-
կեանց վէշայ այդպիսի սարսափների: Հասկա-
նալով արհեստահող տեսարանների ականառեւ
մեր ընկերներին, Բագուի ինժինեաների ան-
տանելի դրութիւնը, դաշնակցութիւնը ջերմօ-
ղէն միանում է նրանց բողոքին այն փորձերի
դէմ, որոնք անվում են բացատրելու խաղաղ
ժողովուրդի կազմակերպված կոտորածը ազգայ-
նական և կրօնական թշնամութեամբ:

Հայոց զբաղմունքական ընկերութեան վար-
չութիւնը խնդրում է մեզ ազգաբնի այն ներ-
կայացման հաշիւը, որ տեղի ունեցաւ փետր-
վարի 17-ին Արտիստական թատրոնում, Բա-
գուի բոլոր փնաւածներին օգտին: Մուտք՝
տոմսակիւնի վաճառումից 657 ռ. 94 կ., ծախք՝
«Кіев. Газ.» լրագիրն ասելով, քաղաք է շտապում
փող աշխատելու՝ տունը պահելու և օրաուր
անող պարտքերը վճարելու: Այստեղ գինեւոր-
ւում և «տրակտիւններում» վառնելով իր դառն
աշխատանքը, կորցնելով և իր առողջութիւնը,
մի քանի տարի օտարութեան մէջ տառապե-
լուց յետոյ, պարտքով հայրենիք է վերադառ-
նում և շատ անգամ թունաւորում իր անա-
րատ ընտանիքը:

Թատրոնին—325 ռ., մնացորդը—332 ռ. 94 կ.
ուղարկված է Բագու, Մարդասիրական ընկե-
րութեանը փնաւածներին բաժանելու համար:

Բաթումի բժիշկների ընկերութիւնը 1905
թիւ փետրվարի 18 ի նիստում, միաձայն ու-
րոշումով, հետեւեալ հեռագիրն է ուղարկել
Մոսկվայի համալսարանին. «Մեր մեծ, խրա-
պէս դժբաղդ հայրենիքի կրած այս դառնօրե-
րին Բաթումի բժիշկների ընկերութիւնը ու-
ղարկում է Մոսկվայի համալսարանին ջերմ
ողջոյններ և շնորհաւորութիւններ իր գոյու-
թեան փառաւոր և արդիւնաւէտ 150 անակի
առիթով: Ընկերութիւնը համոզված է, որ
կանցնեն փորձութեան ծանր օրերը և վերա-
նորոգված Ռուսաստանի վրա կը ծագէ ճշմար-
տութեան և ազատութեան կարող արևը, և
կը լուսաւորվին գիտական մտքի ճաճանչե-
րով մեր ջերմապէս սիրեցեալ հայրենիքի բո-
լոր մութ անկիւնները: Զգալով լաւագոյն օ-
րերի մօտիկութիւնը՝ Բաթումի բժիշկների
ընկերութիւնը ընդարձակ Ռուսաստանի բոլոր
խնայելիքներցիայի հետ միասին բացականչում
է. կեցցէ ազատ համալսարանը վերանորոգ-
ված Ռուսաստանում» (H. 06.)

Ինչպէս անցեալ օրը հաղորդել էինք, Ջիւ-
թուրիւմ փետրվարի 25 ին հազարաւոր ամ-
բոյն յարձակվել է ոստիկանական վարչու-
թեան վրա, կոտորելու ու փշրել ամեն ինչ և
սպանել պրիստաւի քարտուղարին և 3 ստրա-
նիկներին: Այժմ լուրեր են պտտում, որ սպան-
ված է և մի ոստիկանական պրիստաւ: (H. 0.)

Մարիովից հեռագրում են «P. C.» լրագրին
փետրվարի 23-ից. «Харь. Лист.»-ում տպված
է, որ քնակիչներն ստանում են անստորագիր
նամակներ, որոնցով կոչ են անում «ռուս երկրի
քնակիչներին» կոտորելու ուսանողներին: Այ-
սօր ոստիկանապետը դիմեց տեղական խմբա-
գրութիւններին՝ խնդրելով հրատարակել իր
նամակը, որով նա հանգստանալու է ազգա-
բնակչութեան և հաղորդում իր ձեռք առած
միջոցների մասին, որոնցով պէտք է խեղճ
ծագել կարեւորագոյ առկաղութիւնները:

Բաթումից գրում են «H. 06.» լրագրին, որ
տեղական հրէայ հասարակութիւնը սաստիկ
անհանգստութեան մէջ է, որովհետեւ վերջին
ժամանակներս անգաղաք լսվում են լուրեր,
թէ յարձակվելու են հրէայ հասարակութեան
վրա, կոտորելու և կողոպտելու: Հրէաները
դիմել են շրջանի կառավարութեանը և խնդրել
միջոցներ ձեռք առնել այդպիսի հնարաւոր
դիպվածների առաջն առնելու համար:

«Сѣв. Кр.» լրագրի ասելով՝ Վլադիմիրի
նահանգապետը պահանջել է տեղական պու-
տային վարչութեան գլխաւորից Վլադիմիր
քաղաքի այն բոլոր անձերի ցուցակը, որոնք
ստանում են «Наша Жизнь», «Наша Дня» և
Сынъ-Отечества» լրագիրները...

«Двин. Листокъ» լրագիրը մի լուր է հա-
ղորդում, որ աւելի զաւեշտական բնաւորու-
թիւն ունի, քան դառն իրականութեան—
Իվլինսկ քաղաքում թատրոնը փակված է և
փակել է յատկապէս թատրոնի անտարբերները:
Իրա պատճառն այն է, որ ոստիկանութիւնը
պահանջել է թատրոնի թողնել միայն այնպիսի
հասարակութիւն, որի «բարեկարգութիւնը և
բարեյուսութիւնը երաշխաւորել կարելի լի-
նի»: Բայց միջի թատրոնական մի անտրը-
պընեօր կարող է պատահանաւոր լինել իր
յաճախորդների կամ հասարակութեան վստա-
հելութեան համար, երբ ոստիկանութիւնն
այդ չէ կարողանում:

Սարատովից հեռագրում են «P. C.»-ին փե-
տրվարի 23-ից. «Երեխաների պաշտպան ըն-
կերութիւնն իր վերջին նիստում, 900 հոգու
մասնակցութեամբ, վճեց—աչըր—աչըր ունե-
նալով փողոցային սրիկաների մի քանի յար-
ձակումները աշակերտների վրա,—խնդրել նա-
հանգապետին միջոցներ ձեռք առնել զաղա-
րեցնելու այն բազմաթիւ թուուցիկ թերթիկ-
ները, որոնցով կոչ են անում կոտորելու ա-
շակերտներին, ուսանողներին և ինտելլիգէնտ
մարդկանց: Գաղտնիական հերքում հրատարա-
կել «Լատինական Գործակալութեան» դէմ և
ձեռք առնել նախազգուշական միջոցներ, որ
Կուրսկի դէպքերի նման պատահարներ մեղա-
նում էլ տեղի չունենան»:

«Русь» լրագիրը հաղորդում է, որ ներկա-
յում Պետերբուրգում Բարձրագոյն հաստատա-

ված խմբագրական յանձնաժողովը վերջացնում է իր աշխատանքները նոր քրեական օրենսգրքի գործի վերաբերությամբ. դա 1903 թվի մարտի 22 ի քրեական օրենսգրքին է, որ այժմ մտադրություն կայ գործադրության դեմը ամբողջ կայսրությունում մէջ կամ այս տարվայ վերջերից կամ հետեւեալ տարվայ սկզբից:

ԱՍՏԻԱՆԻՑ մեզ գրում են. «Ինչպէս ամեն տարի, այս տարի էլ տեղիս հայերը կատարեցին Վարդանանց տօնի հանդէսը: Հինգ շաբթի, փետրվարի 24-ին, դեռ վաղ առաւօտեանից ժողովուրդը խմբվել էր եկեղեցու բակը և բուռն հետաքրքրութեամբ սպասում էր պատարագի վերջանալուն, որպէս զի ներկայ գտնվի կատարվելիք հանդէսին: Կէս օրվայ ժամի 12-ից յետոյ հանդիսականները խումբ-խումբ դիմեցին եկեղեցուց դէպի մանկական պարտեզի շէջը: Սկզբում մտադիր էին հանդէսը կատարելու պարտիզի դահլիճում, սակայն դահլիճը բաւականութեւն չէր տալու պատճառով, կատարեցին դուրը: Պէտք է ասել, որ այդ օրը, բացի Աստուածային քանդակներից, ներկայ էին և սոսկալի կոտորածից աղաղակած բաւականաչափ բազուկներ: Օրիորդներից և փոքր տղաներից մի քանիսը արտասանեցին ոտանաւորներ և յետոյ պարտիզում սովորող մանուկներից պարտասու ված խումբը երգեց մի քանի ազգային երգեր: Ի վերջոյ խօսեց կանանց բարեգործական ընկերության հիմնադիր անդամներից մէկը—տիկին Մամիկոնեանցը, բացատրելով այդ օրվայ տօնի նշանակութիւնը և աւելացրեց, որ յայտնում է շնորհակալութիւն այն անձանց, որոնք իրանց ներկայութեամբ պատուել են հանդէսը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

«Journal» լրագրի թղթակիցը երկար յօդուած է նուիրում Վրացիվոստօկի նշանակութեան մասին Ռուսաստանի համար: «Ռուսները, ասում է լրագրի, կորցրին Հնուաւոր Արեւելքում ունեցած իրանց ծովային խարխիւներից մինը: Ինչ նշանակութիւն ունի ուսումնարանի ձեռքում մնացած միւս յինակէտը՝ Վրացիվոստօկը, որին, ըստ երևոյթին, սպասում են հապճեպից: Եթէ Պօրտ-Արտուրը ունէր բացառիկ ռազմագիտական նշանակութիւն Ձիւնաստանի վերաբերմամբ, բայց տեղագրական տեսակէտից նա շատ պակասութիւններ ունէր, նաւահանգստի ներդրութիւնը, աւազները, բլուրների աննշան բարձրութիւնը, որ չէ կարող պաշտպանել նաւահանգիստը ռազմականութիւնից, այդ բոլորը սաստիկ ֆնտսում էին Պօրտ Արտուրին, իբրև նաւահանգստի: Չը նայելով այդ բոլոր պակասութիւններին, Պօրտ-Արտուրը այնու ամենայնիւ կարողացաւ դիմանալ ութ ամիս և իր նուաճողների վրա սոսկալի զոհեր նստեց: Վրացիվոստօկի դրութիւնը այլ է: Այդ լաւ պաշտպանված ծոցի ծաւալը թոյլ է տալիս, որ մի մեծ պատերազմական նաւատորմ տեղաւորվի նրա մէջ Շրջապատված բլուրներով, մինչև 200 մէտր հեռավորութեամբ, որոնց վրա այժմ գտնվում են սաստիկ սպառազինված ամբոցներ, այդ ծոցը պաշտպանված է, բացի գրանից, ժայռաւ կղզիով, ծոցի մուտքում: Կղզին ութ կիլոմէտր տրամագիծ ունի և սաստիկ ամրացրված է: Օղիք մուտքը ակնաւորված է, Վրացիվոստօկի արտիլլերիան երկու անգամ աւելի զօրեղ է, քան Պօրտ Արտուրի արտիլլերիան: Անկասկած, հնագին է Վրացիվոստօկի նշանակութիւնը Ռուսաստանի համար: Միակ բանը, որ մի քիչ նուազեցնում է Վրացիվոստօկի գերազանց յատկութիւնները—դա սառույցներն են, որոնք երեք ամսվայ ընթացքում հնարաւորութիւն չեն տալիս ազատ մտնել և դուրս գալ նաւահանգստից: Հէնց այդ ստիպեց Ռուսաստանին որոնել ուրիշ կէտ ծաղաղ Ուկրաինայի ամբիւն, որ կարողանար ծառայել իբրև նոր սառույց նաւահանգիստ: (C. II. B.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիւրքիա: «Courrier Europien» բերում է քաղաքացիներ այն յիշողութիւններից, որ նորբար հրատարակեց Լոնդոնում ուղեգրական յայտնի արեւելագետ, պրօֆէսոր Ա. մէնդուս Վալթերի, որը մօտ կէս դար ընդհանրապէս խաւած և մասնաւորապէս թիւրքական շահերի հեղինակաւոր պաշտպան է հանդիսանում Եւրոպական մամուլի մէջ: Նրա, որպէս ուսուցարանի հայրենասէրի, քաղաքական համո-

զուսնեմով, Թիւրքիայի ամբողջութիւնը և զօրութիւնը պէտք է ծառայեն նիւրոյկ Ուսուցարանին սպառնող սլաւոնական արեւելիքի դէմ: Վալթերիի հրատարակած յիշատակարաններից երեւում է, սակայն, որ այդ կատարի Թիւրքիայի քաղաքական կենսունակութիւնը, որին կորստեան դուռն է հասցրել սուլթան Աբդուլ Համիդը: «Երբ ես ակնարկեցի սուլթան Աբդուլ-Համիդի բեֆօրմների անհրաժեշտութեան մասին Հայաստանում,—ասում է Վալթերի,—նա կատարեց և ասեց ինձ, որ շուտով խելքի կը բերի հայերին «փոքրիկ հարուածով զլինի»: Այդ փոքրիկ հարուածը դարձաւ ամենաապրափելի կոտորած, որից ցնցվեց ամբողջ Եւրոպան: Երբ ես յանձն առայ համարձակութիւն անձամբ յայտնելու սուլթանին այդ կոտորածի մասին, որը խելք Թիւրքիայից ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը, նա զղջման ոչ մի նշան չը ցոյց տուեց, այլ կարծես հրճուանքով ասեց ինձ, որ «այդպէս էլ հարկաւոր էր», որովհետեւ կորցնելով Յունաստանը, Ռուսիան, Սեւերան, Բոլգարիան և Եգիպտոսը, Թիւրքիան իր բոլոր ոյժերով պէտք է պաշտպանէ իր կալուածները Փօրտ-Արտուրում: Օսմանեան կայսրութեան վերջոյնեալ մասերի կորուստը հասարակագոր էր քաղաքական օրգանիզմի ոտերի և ձեռքերի կտրելուն, որից մնացել ամբողջութեամբ միայն միջին մասերը, դէպի որոնց ձեռք են մեկնում այժմ հայերը, յենվելով Եւրոպայի պաշտպանութեան վրա»:

Այդ բացատրութիւններից յետոյ սուլթանին հետ, Վալթերի գրեց իր բարեկամներին, որ Թիւրքիայի փրկութեան համար նա արդէն յոյսեր չէ դնում սուլթան Աբդուլ-Համիդի վրա: (C. II. B.)

Եւրոպա փախած լուսաւորված արաբ Նէշիւր Աբդուլ-Բայ նորից Պարսկում հրատարակեց ֆուտուսիստ ինքուով դի գիրք «Réveil de la nation arabe» վերնագրով: Ինչպէս երեւում է Աբդուլի բէյի աշխատութիւնից, նա այդ գիրքը կազմել է այն ժամանակ, երբ նա Եւրոպայի մի հարկաւոր պատիւն էր հանդիսանում: Հեղինակի քաղաքական դաւանանքը պարունակվում է այն խօսքերի մէջ, որոնք խոշոր առանձնով տպված են գրքի կազմի վրա, այն է. «Արաբների բնական նահանգները պէտք է պատկանեն արաբներին, բայցառապէս Թիւրքերան վերադառնան—Թիւրքերին, Հայաստանը—հայերին, Քիւրդիստանը—քիւրդներին, Ալաւիին—ալաւիներին, յունական արշիպելագի կղզիները—յոններին, Մակեդոնիան պէտք է բաժանվի Բոլգարիայի, Սերբիայի և Յունաստանի միջև: Հեղինակը համոզված է, որ Թիւրքիան շուտով անխուսափելի կհրապոյ մասնաւոր է լինելու և այդ բանը անպիտանաւորում է Թիւրքիայի քաղաքական և սոցիալական կենսի կատարեալ քայքայման պայժառ փաստերով: Արաբների ազգային ինքնահաստատութիւնը—Աբդուլի բէյի խօսքերով—զօրեղ մղու մնաւ ստացաւ և ամրացաւ հայկական շարժման շնորհիւ Թիւրքիայում: Քիւրդները, որոնք մինչև վերջին ժամանակը Թիւրքաց կառավարութեան կոյր գործիք էին հայերի դէմ, այժմ հասկացան իրանց սխալը, որովհետեւ հայերին ջնջելով իրանց ներխաձայնարանում են իրանց սփական ռիչչացումը Թիւրքաց քաղաքականութեան խորամանկ վարչիչների ծրագրով: Եւնէիս ապստամբների եօթ ամիս տևող աշղոյ կռիւն Թիւրքերի դէմ,—ասում է ապա Աբդուլի բէյը,—բաւական ոյժ և խրախոյս տուեց արաբներին: Նրանց հերոսական կռիւ մէջ կրօնական զգացմունքը ոչ մի գիւր չէ խաղում: Արաբ մասնագիտականների հետ հոգեւոր մտքերով և գործունէութեամբ միացան արաբ բրիտանիաները Սիրիայում և Պալեստինայում: Վերջինները հիմնեցին մի քանի կոմիտէներ Եւրոպայում, Եգիպտոսում փող և զէնքեր հաւաքելու համար արաբ ապստամբներին: Ընդ մասնագիտականների հոգեւոր գլուխ է յայտարարված արդէն Մէկիայի շէրիֆը, Մամուլի սրբուհը: Ստամբուլի սուլթանը խալիֆութեան ուղարկատու է ճանաչված: Արաբական կոմիտէները սերտ կապեր հաստատեցին հայկականների հետ, յարաբերութիւններ կապեցին քիւրդ շէյխերի հետ քիւրդանուր և միաբան կռիւ համար Թիւրքաց տրեպանութեան դէմ և օսմանեան գլխաւոր աշխարհի թիւց ազատվելու համար, որը պէտք է հնչանայ սուլթան Աբդուլ-Համիդի արեւնաճից թագաւորութեան հետ միասին: (C. II. B.)

Արաբիա: Ի լրումն վերոյիշեալ տեղեկութիւնների Թիւրքիայի մասին, անգլիական լրագրիները հետեւեալ հետաքրքիր լուրերն են հաղորդում արաբական մի քաղաքական դաշնակցութեան ծագման մասին, որի նպատակն է հաստատել առանձին արաբական թագաւորութիւններ քաղաքակիրթ Թիւրքիայի տեղի: Այդ դաշնակցութեան կոմիտէներ գտնվում է եգիպտական Կահիրէ քաղաքում և նորեւն դիմեց բոլոր պետութիւններին և ազգային մի կոչով, որի մէջ պարզօրէն ցոյց է առնիս ապագայ պետութեան սահմանները և նրա սահմանադրութեան հիմնական սկզբունքները: Արաբական թագաւորութեան գլուխն կանցնի արաբական շէյխերից մէկը: Նա կը կառավարէ առանձին սահմանադրութեան հիման վրա: Մէկիան և Մէկիան իբրև նորիսական մուսուլման քաղաքներ, կը ստանան առանձին ինքնավարական կազմակերպութիւն: Այդպիսի առանձնաշարժութիւն կը տարածվի նաեւ Պալեստինի, Սերբիայի և Հայաստանի վրա: Հաղորդելով այս տեղեկութիւնները «Խո-

ՎՈՏԻԱ» լրագրի հարց է տալիս, արդե՞ք հնաբաւոր է սահմանադրական կազմութիւնը համաձայնեցնել զուրանի հետ: Այդ մասին կոչի մէջ ոչինչ չէ ասված: Առհասարակ, այդ կոչի մէջ արաբական ապագայ պետութեան կազմութեան մասին քիչ բան է խօսվում: Այդտեղ գլխաւորապէս ուրիշ հարց է արծարծվում—այն պատճառները, որոնք ստիպեցին կոմիտէին հրատարակել այդպիսի կոչ: Նրա կազմողները բացարձակ յայտնում են, որ եթէ նրանք վստահացան այդպիսի քայլ անել, այն պատճառով, որ վերջերս Թիւրքիան չափազանց ընկել է մեծ պետութիւններից մէկի ազդեցութեան ներքոյ և կարող է դառնալ նրա գաղութներից միւն: Այս ակնարկը վերաբերում է Գերմանիային:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1 մարտի

ՄԻՆՍԿ: Ռուսիականութիւնը ձեռքաւորեց ուստիական պետութիւնը վրա գնդակ արձակող յանցաւորին, որի անուն է Հերման, 20 տարեկան: 10 Նոյեմբ, 28 փետրվարի: Եւրոպական դեսպանութիւնը հրատարակեց հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. «Լուրերին նայելով ուսաց կառավարութիւնը նորից հրաւիրեց մեծ պետութիւնների ուղարկութիւնը այն բանի վրա, թէ հապճեպական զօրքերը խախտել են Չինաստանի չէզոքութիւնը, յայտնվելով ուսաց բանակի ետեւում, Պեչիլիան գաւառում, ուր նրանք կարող էին յայտնվել միայն անցնելով Մոնղոլիայից: Իսկապէս հապճեպական զօրքերը երբէք չեն անցել Մոնղոլիայից, մինչ Ռուսաստանը արդէն վաղուց ստանում էր Մոնղոլիայից զանազան առարկաներ և միշտ ուղարկում էր այդտեղ ծախեալ և զինաւորված զօրքեր: Նա վախեցնում էր տեղացի իշխաններին և ժողովուրդը և ստիպում էր նրանց օգնել ուսաներին թիկունքից: Ապա առաւ է բերվում Ռուսաստանի կողմից Չինաստանի չէզոքութեան խախտման 6 կէտեր: Ուս զօրքաւորները անցել են Մոնղոլիայի գաւառական կէտերից, կատարել են բեկվիդեցիա և փորձել են անցկացնել Մոնղոլիայից Թիւրքանոթներ և ռազմավթերը, որոնք ապա յարքունիս գրաւվեցին չինական իշխանութիւններից, Կալաքանից:

ԵՄԼՏԱ, 1 մարտի: Նահանգապետը մերժեց տեղական հրէական հասարակութեան միջնորդութիւնը՝ 20,000 ռուբլի բաց թողել մանրավաճառական գումարներից պատերազմի կարիքների համար: 10 Նոյեմբ, 28 փետրվարի: Համայնքների ժողովը Սըր Ալմուր Կինգի հարցմունքին վերաբերած ձեռնարկներին ուսաց կառավարութեան կողմից վարձատրութիւն տալու մասին, Բալֆուրը յայտնեց, որ բրիտանական կառավարութեան Հոլլում նշանակած յանձնաժողովը որոշել է. «Պահանջված 103 830 ֆունտ ստերլինգից միայն 60023 ֆունտ գումար է ճանաչված է իսկական օրինաւոր պահանջ»: Ռուսաստանը վճարել է 65,000 ֆունտ: Չահապանութիւնը որ ասում է մօտ 5000 ֆունտ ստերլինգ, բրիտանական կառավարութիւնը պահեց հարաւոր չը նախատեսված պահանջները գոնացման համար, որի մասին հաղորդվեց ուսաց կառավարութեան:

ՍՈՖԻԱ, 28 փետրվարի: Մակեդոնիայից շարունակում են գալ, յուզել լուրեր: Թիւրքաց զօրքերի և բոլգարական չետաների մէջ տեղի են ունեցել լուրջ ընդհարումներ: Կուսմանովա կաղաւթում, Պեցոյօ գիւղում, Թիւրքաց զինուորները ռիչչացրել են 12 հոգուց բաղկացած մի ապստամբական չէտա: Աւստրիական ժողովրդական օֆիցերի զեկուցման համաձայն, բոլոր զիւնքները ստանալի այլապէս չէին:

2 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մարտի 1-ի նիստում միւնիստրների կոմիտէն աւարտեց զեկուտները 12-ի Բարձրագոյն հրամանի 6-րդ կէտի հարցերի ըննութիւնը, վերաբերելով ներդաւարութեան հաւատի գործերում: Դիմելով ոչ բրիտանաց կրօններին, կոմիտէն կանգ առաւ այն եղբակացութեան վրա, որ պէտք է վերաբերել օտարադաւանների ազդեցութիւնի մեղադրանքին և օտարադաւան, մանաւանդ մահմեդական հոգեւոր անձանց զրուլթեան հարցերը: Խորհրդակցութեան ենթակցվեցին իսլամական ընտրութեան և հաստատութեան կարգի, մահմեդական զարգացների բացման հարցերը, կերպիւնների և հիւսիսային կովկասի, Թիւրքստանի և Անգլիասպեան շրջանի մահմեդական համայնքների հոգեւոր գործերի վարումն: Կոմիտէն կարծում է հանել նրանց նահանգական վարչութեան անմիջական կառավարութիւնից:

և յանձնել առանձին հոգեւոր առեւանդներ, վարչութեան հսկողութեան ներքոյ: Անցնելով լաւ մայրտներ հարցին, կոմիտէն անհրաժեշտ համարեց ենթակցել լաւ մայրտների մասին օրէնքները լիակատար վերաբնութեան լաւալիս հոգեւորականութեան ներկայացուցիչներին և լաւ մայրտների լաւ ծանօթ աշխարհականների մասնակցութեամբ:

10 Նոյեմբ, 1 մարտի: Եւրոպական դեսպանութիւնը հրատարակել է հետեւեալ պաշտօնական հետազոտը. «Մինչեւ ուղղութեամբ հապճեպական զօրքերը գրաւեցին փետրվարի 26-ին Իսպանի, դուրս բերվով այդտեղից ուսաներին: Շախէի ուղղութեամբ հապճեպական զօրքերը շարունակում են հալածել ուս զօրքաւորները զանազան տեղերում:

ԲԵՐԼԻՆ: Իշխաւորեց լուրջ մայրտ յանձնաժողովը ընդունեց երկրորդ ընթերցանութեամբ զինուորական նախահաշիւը և հաւանութիւն տուեց նաեւ, հակառակ նախնական ձայնաւորութեան, հեծելազօրքը աւելացնելու ծրագրին, 26 նոր էսկադրօնների կազմութեամբ: Օրինադի հաստատութիւնը բէյիստապեց ապահոված է:

ՎԻԵՆԱ, Աւստրիան մտադիր է ապագայում ստանձնել հոգեւոր առաքելութիւնների և հաստատութիւնների նոլանաւորութիւնը ամբողջ Արեւելքում: Մեծ զորքոյց հանեց Հոմից ստացած այն լուրը, թէ իտալական զինուորական միւնիստրութիւնը պահանջել է լրացուցիչ կրէդիտ 200,000,000 լիրէ: Աւստրիայի կողմից ալպիական սահմանը ամրացնելու համար: Տէլին, 1 մարտի: Մուկլէնի մօտ կուռւմ գերազանց կերպով գործում էր հեծելազօրքը Բեննիկովապի հրամանատարութեամբ: Չինացիների կողմից դէպի մեծ պետութիւն է նկատվում:

2 մարտի

ՏՈՒՐԿ, 1 մարտի: Միկադոն կարգադրեց թոյլատրել ուս գերի բերելներին խնամել ուս գերիներին: Ի նկատի ունենալով, որ Եւրոպիան հարկաւորված է խնամել իր բերելներով Մանչուրիայում հապճեպական վերաւորներին, ուս բերելները վարձատրութիւն կը ստանան հապճեպական կառավարութիւնից: «Կոլումբի» լրագրից ասում է, թէ սկսվեց պատերազմի երրորդ շրջանը, բայց հաշտութեան բանակցութիւնները բոլոր չէ մօտենում, որովհետեւ Ռուսաստանը որոշել է շարունակել կռիւն: Ռուսաստանի յայտարարութիւնը նոր զօրք ուղարկելու մասին յիշեցնում է բաւարական էսկադրայի աւաքումը:

10 Նոյեմբ, 1 մարտի: «Տենտրալ Նիւս» գործակալութիւնը իմացել է, որ մինչև այժմ զլխաւոր խոշնդուր Եւրոպիայի հետ հաշտութեան բանակցութիւնների սկսելուն հանգիստում է պատերազմական տեղանքի խելքը: Լեւոսեանից յետոյ տուգանքի բանակցութիւնը որոշված էր 100 միլիօն ֆունտ ստերլինգ, իսկ այժմ Եւրոպիան ցանկանում է ստանալ 150 միլիօն ֆունտ ստերլինգ: Եթէ պատերազմական գործողութիւնները դադարեն շուտով, այդ դէպքում Եւրոպիան կը պահանջէ պակաս գումար: Լուրերին նայելով, Չինաստանի պատերազմը չէ զանաչում գումարների:

ԿԱՆԵՍ, 1 մարտի: Երրորդ բալտիկան էսկադրայում ամեն բան բարելաւվո է:

ՊԱՐԻՉ, 1 մարտի: Էմբրի հրամանով Աֆրիկայում զինարանները ներկայումս պատրաստվում են նոր ուսական տեսակի զէնքերի պատրաստութեամբ: Ազգեցիկ զիւլօմատները հաստատում են, որ հապճեպները մօտեցել են տապալել չինական հարստութիւնը և կայսր հրատարակել Պեչիլի փոխարքայ Իւնչիկային, որ Լիւնուզաւադի յաջորդն է Իւնչիկայը: Չինաստանում ամենախելօք և ազգեցիկ անձն է—40000 ուս գերիները շուտով կուղարկվեն Դալիի վրայով Եւրոպիա:

ԴԱՐԻՍԿ, 1 մարտի: Այսօր ցերեկը քաղաքի կենտրոնում բազմամարդ փողոցում սպանութեան փորձ կատարվեց պրիստաւի օգնական Երեմիին դէմ: Արտճանակի հարուածով վերաւորված է զլինից: Գնդակը հանված չէ: Ցանցաւորը բռնված է. ընտրութիւն է կատարվում:

Տէլին, Եւրոպացիները յարձակում գործեցին Տէլինի ամրութիւնները վրա, բայց յետ մղվեցին մեծ կորուստով: ՏՈՒՐԿ, 28 փետրվարի: Ռուսները ներկայումս ջանքեր են գործադրում, գիմարութիւն ցոյց տալու, Մուկլէնից 25 մղոն դէպի հիւսիս: Կարծում են, որ ուսաների թիւը կուռւմ 300,000 հետեւի էր, 26,000 հեծելազօրք և 20,000 արտիլլերիստ ու 1360 թիւաւոր: Եւրոպական կորուստների մասին լրացուցիչ տե-

И. + ПЕРМЕСЬ. МОН VII № 15